

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերջագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

- Share — copy and redistribute the material in any medium or format
- Adapt — remix, transform, and build upon the material

7568

# Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր

ՍՕՑԻԱԼ ԴԷՄՕԿՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՁԱՆԻՆ ՀԱՄԱՐ



ՎԵՐԱՔՆՆՈՒՄ 37-րդ ՊԱՏԳ ԺՈՂՈՎԷՆ

Տ Պ Ա Ր Ա Ն

« Ե Ր Ի Տ Ա Ս Ա Ր Դ - Հ Ա Յ Ա Ս »

Շ Ի Բ Ա Կ Է Օ

1922


329.14  
U-78

# ԿԱՆՈՆԱԳԻՐ

329.14

Ա-78

ՍՕՑԻԱԼ ԴԷՄՕԿՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻՆ ՀԱՄԱՐ



(Վերաբնակում 37-րդ Պատգմ. Ժողովին)

Տ Պ Ա Ր Ա Ն

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի

Շ Ի Բ ա կ օ

1922

Բ 2001

2010

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր

ՍՕՑԻԱԼ ԴԷՄՕԿՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿ-  
ՑՈՒԹԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻՆ

— [\*\*\* (Լ) Զ \*\*\*] —

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՐՏԱԿԱ-  
ՆՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆ

ՅՕԴ. 1.— Աճէն անոնք, (առանց սեռի, կրօնի եւ ազգի խտրութեան) որոնք 18 տարին լրացուցած են եւ կընդունին Հնչակեան Կուսակցութեան սկզբունքները եւ տակաւ կան կատարեալ համոզումով, կընդունուին անդամ Սոցիալ Դեմօկրատ Հնչակեան Կուսակցութեան:

ՅՕԴ. 2.— Իւրաքանչիւր նորեկ անդամ, (այր թէ կին) Մասնաճիւղի ընկերներու ներկայութեան պարտաւոր է կատարել իր երդումը:

56 999 - ահ



1340.70

«Կուխտեմ յսևուն Ընկերային Յերայտո-  
խութեան, յսևուն Համաշխարհային Պրո-  
լետարիատի յաղթանակի համար աշխատող  
և մեռնող կերոսներուն, հաւատարիմ գին-  
ւորը մեալ Սօցիալ Դեմօկրատ Հնչակեան  
Կուսակցութեան և անոր որդեգրած Ծրա-  
գրին իրականացման համար տրամադրեղ  
իմ Ֆիզիքական, Մտնւորական և Բարոյա-  
կան բոլոր ոյժերս»:

(Երգման գործողութիւնը կատարուելէ  
վերջ, նորեկ անդամը կ'ստորագրէ երգմը-  
նագրի երկու պատճէն, որոնցմէ մին կը մը-  
նայ Մասնաճիւղի մօտ: միւսը, կը զբոհուի  
Կեդր. Վարիչ Մարմնին):

ՅՕԴ. 3.— Իւրաքանչիւր անգամ պար-  
տաւոր է իբր մուտք երկու տօլար կամ ա-  
ւելի վճարել եւ այնուհետեւ մէկ տօլար գին-  
ւորական տուրք: Կիներ եւ Օրիորդներ՝  
50 սէնթ մուտք եւ 10 սէնթ ամսնվճար վը-  
ճարելու են:

ՅՕԴ. 4.— Իւրաքանչիւր նորեկ անդամ  
պարտաւոր է Մասնաճիւղի անդամներէն  
երկու հոգի երաշխաւոր ներկայացնել, որ-  
ոնց անունը կարճանագրուի պաշտօնական  
տօմարին մէջ, անպատեհութեանց պարա-  
զային՝ անոնցմէ հատուցում պահանջելու  
համար:

ՅՕԴ. 5.— Իւրաքանչիւր Սօցիալ Դեմօկ-  
րատ անդամ կէտ առ կէտ պարտաւոր է կա-  
տարել այն բոլոր պարտականոթիւնները,

որոնք ընդգծուած են ներկայ Կանոնագրի  
մէջ:

ՅՕԴ. 6.— Իւրաքանչիւր անգամ պար-  
տաւոր է անպատճառ ներկայ գտնուիլ Ան-  
դամական Ժողովներուն. հակառակ դէպ-  
քին՝ պարտաւոր է յաջորդ Ժողովին ներ-  
կայացնել իր բանաւոր պատճառները:

ՅՕԴ. 7.— Անգամ մը, Անդամական Ժո-  
ղովին, իր առաջին բացակայութեան՝ կազ-  
մարարուի, երկրորդին՝ կը յանդիմանուի,  
իսկ երրորդին՝ կենթարկուի տուգանքի:  
Տուգանքի դատապարտուած ընկեր մը սի-  
րայօժար կրելու է իր պատիժը, առանց Վե-  
րին Մարմինները մատնելու դատաստանի՝  
կամ քննութեան աւելորդ աշխատանքներու:

ՅՕԴ. 8.— Անգաղտնապահ ընկեր մը, կը  
յանդիմանուի ընկերներու ներկայութեան եւ  
կը զբոհուի իր բոլոր իրաւասութիւններէն ե-  
րեք ամիս, կատարելով միանգամայն իր  
բոլոր պարտականութիւնները:

ՅՕԴ. 9.— Անգամ մը, որ առանց յար-  
գելի պատճառներու (հիւանդութիւն, ան-  
գործութիւն, լիւարութիւն), երեք ամիս  
չէ վճարած իր անդամավճարները, կը դադ-  
րի Մասնաճիւղի անդամակցութենէն:

ՅՕԴ. 10.— Այն ընկերը, որ Կուսակ-  
ցութեան սկզբունքներուն եւ գծուած տակ-  
տիկային հակառակ կը գործէ եւ ուղղակի  
կամ անուղղակի միջոցներով պատճառ կը

դառնայ Կոստահյական մեխանիզմին խան-  
դարման, Ընկերական Ատեանի կենթարկու-  
ու յանցանքի ապացուցումէն վերջ՝ Կեդր.  
Վարիչ Մարմնի վճիռովը կ'արտաքսուի  
չըջաբերականով եւ թերթով:

307. 11.— Ամէն Անդամի վրայ պարտք  
կը դրուի՝ «Երիտասարդ Հայաստան»-ի  
բաժանորդ գրուիլ:

307. 12.— Իւրաքանչիւր Անդամ առանց  
նայելու իր ունեցած կրթութեանը եւ զբա-  
ղումին, պարտաւոր է տարածել Հնչակեան  
գրականութիւնը իր ընկերներու եւ ծանօթ-  
ներու շրջանակին մէջ:

— ՊԱՏԺԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

307. 13.— Ա. Յանդիմանութիւն, Բ.  
Տուգանք, Գ. Պաշտօնադրկում, Դ. Կախա-  
կայում, Ե. Արտաքսում, Զ. Հասարակա-  
կան-ընկերական պոյֆօթ: (Պատիժը հա-  
մեմատական կըլլայ գործուած յանցանքին  
եւ գայն տնօրինողը կըլլայ պատկանեալ  
Մարմինը: Ծանրակշիռ պատիժները կեն-  
թարկուի վ. Մարմնի հաւանութեանն ու  
վճիռին:

ՄԱՍՆԱՃԻԻՂ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

307. 14.— Եօթը ընկերներէ եւ Հինգ

ընկերուհիներէ բաղկացած Մասնաճիւղ մը  
օրինաւոր կը ճանչցուի: (Այն տեղերը՝  
ուր վրեոյիչեալ թիւին կեսէն աւելին ներ-  
կայացնող անդամներ կը պակսին, կը կոչ-  
ուին Հնչակեան Խումբ, որ կը կապուին ի-  
րենց մօտիկ Մասնաճիւղին հետ եւ անոր խո-  
ղովակովը կ'ստանան պաշտօնական գրու-  
թիւններ. կնիք կը յանձնուի անոնց միայն  
այն ատեն, երբ ընդունուած պաշտօնական  
թիւը կը լրացնեն՝ ղրկելով իրենց վիճակա-  
ցոյցը):

307. 15.— Իւրաքանչիւր Մասնաճիւղ  
կընտրէ Վարչութիւն մը, բաղկացած 3-5  
անդամներէ:

307. 16.— Մասնաճիւղի Վարչութիւնը  
անդամական ժողովներու օրոշումները եւ  
անոր ընթացիկ գործերը լրիւ գործադրող  
Մարմինն է, որը իր մէջէն կընտրէ Դիւանը:

307. 17.— Մասնաճիւղի Վարչութեան  
պաշտօնավարութիւնը կը տեւէ ՎԵՑ ամիս:  
Այդ պաշտօնավարութեան շրջանէն վերջ,  
Վարչութիւնը վերընտրելի կըլլայ, երբ ան-  
դամական ժողովէն գնահական քուէ կ'ստա-  
նայ:

307. 18.— Մասնաճիւղի Վարչութիւնը  
պարտաւոր է կոստահյական հարցեր շօշա-  
փող բոլոր գրութիւնները ներկայացնել ան-  
դամական ժողովին, առանց անգրադառ-  
նալու անոնց վնասակար կամ օգտակար բը-  
նոյթին:

307. 19.— Իւրաքանչիւր Մասնաճիւղ իր ներքին տեղական գործերը կարգադրելու ազատ իրաւունք ունի. բայց պիտի ըզգուշանայ կուսակցական ընդհանուր բնոյթ ունեցող գործերուն միջամուխ ըլլալէ: Այդ առթիւ նա կրնայ թելադրանքներ ընել, բայց ոչ պահանջ. պահանջները միմիայն Պատգմ. Ժողովի սեղանին վրայ կուգան:

307. 20.— Իւրաքանչիւր Մասնաճիւղ պարտաւոր է ամիսը ԵՐԿՈՒ անգամ անպատճառ Անդամական Ժողով դումարել: Ժողովներու օրերը նշանակուելու են կանոնաւորապէս եւ իր ատենին զրկուելու են «Երիտասարդ Հայաստան»-ի մէջ հրատարակուելու համար:

307. 21.— Իւրաքանչիւր Մասնաճիւղ ամէն տարի Յունվար Միկ-ին պէտք է Շրջ. Վարիչ Մարմնին ուղարկած ըլլայ իր վիճակագրութիւնը, անդամներու ցանկն ու հաշիւները:

### ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

307. 22.— Անդամական Ժողովը Մասնաճիւղի մը մասնաճիւղային ընթացիկ օլար տաւորութեանց եւ իրաւասութեանց սահմանին հսկող Ժողովն է, որուն որոշումները չը գործադրող Վարչութիւնները բեկանելի են:

307. 23.— Ընկերուհիներ կարող են եւ եթէ կուզեն առանձին կը գումարեն իրենց Ժողովները՝ որպէս ուրոյն Մասնաճիւղ, եթէ օրինական թիւը կը լրացնեն, առաջնորդուելով սոյն կանոնագրութեամբ:

307. 24.— Անդամական Ժողովի բացումը կը կատարուի նախորդ Ժողովի արձանագրութիւնը կարգացուելով եւ վաւերացուելով: Վաւերացուած արձանագրութիւնները առանց փոփոխութեան՝ արձանագրուելու են մեկանով եւ կարելի եղածին չափ, մաքուր գրով արձանագրութեան տօմարին մէջ:

307. 25.— Անդամական Ժողովներու օրակարգը կը պատրաստէ Վարչութիւնը. սակայն Ժողովի ատեն անդամներն ալ հարցեր կրնան առաջարկել՝ նայած ընկերներու բուէին:

307. 26.— Մասնաճիւղ մը իրեն եկած կուսակցական բնոյթ ունեցող գրութիւնները ամբողջն ալ կուենայ Անդամական Ժողովի սեղանին վրայ. բայց ամբողջը կարգալ տալէն վերջ, նկատի կանոնին միայն այն գրութիւնները, որոնք տեղական Մասնաճիւղի ընթացիկ գործերուն կապուած են: Իսկ այն գրութիւնները, որոնք կը շօշափեն կուսակցական ներքին կամ արտաքին ընդհանուր խնդիրներ, Մասնաճիւղը պարտաւոր է անոնց ցանկը միայն առնել եւ գրութիւնները ուղարկել Շրջանի Վարիչ Մարմնին:

307. 27.— Վարչութիւնը պարտաւոր է պահել Անդամական Ժողովներու արձանագրութիւնը: Հինգած շրջաններու արձանագրութիւնները պէտք է ուղարկուին Շրջ. Վարիչ Մարմնին:

307. 28.— Մասնաճիւղեր ազատ են իրենց անդամական ժողովներուն համար օրուան դիւան մը ընտրել, որը արձանագրութիւնը կազմելով կը յանձնէ Մասնաճիւղի Վարչութեան: Ամէն տարուայ արձանագրութեանց համար նոր տօմար գործածելու է, հին լեցուածները ղրկելով Վ. Մարմնին:

307. 29.— Մասնաճիւղի Վարչութեան Ատենապետը, Ատենադպիրը, Գանձապահը, Կնքապահը այն պաշտօնը ունին, ինչ որ ունին Շրջ. Վարիչ Մարմնի Ատենապետը, Ատենադպիրը, Գանձապահը և Կնքապահը:

ՄԱՍՆԱԾԻՒՂԵՐՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

307. 30.— Իւրաքանչիւր Մասնաճիւղ, (արանց թէ կանանց) ուրիշ քաղաք մը փոխադրուող իր մէկ ընկերոջ պէտք է յանձնէ յանձնարարագիր վկայական մը, որը իր կարգին կը ներըայացնէ իր նոր գացած տեղի Մասնաճիւղին: Առանց այդ յանձնարարագիր-վկայականին, Մասնաճիւղ մը իրեն անդամ նշանակելու իրաւունք չունի ուրիշ Մասնաճիւղէ մը եկող ո եւ է ընկեր, ինչ ալ որ ըլլայ անոր դիրքն ու ներկայացուցած պայմանը:

307. 31.— Բողոք կը ներկայացուի Կուսակցութեան օրինական Մարմիններուն, որոնք հետեւեալներն են.— ա.— Մասնաճիւղի Վարչութիւն. բ.— Անդամական Ժողով. Գ.— Շրջանային Վարիչ Մարմին: Դ.— Ամերիկայի Շրջանի Ընդհ. Պատգ. Ժողով: Ե.— Կեդր. Վարչութիւն: Զ.— Ընդ. Պատգամաւորական Ժողով: Բողոքը եթէ կը վերաբերի կուսակցական խնդիրներու շուրջ, կը մնայ միայն կուսակցական օրինական սահմաններու մէջ. հակառակը վերաբերուիլ կը նշանակէ՝ կուսակցաւրելլալ:

307. 32.— Իւրաքանչիւր անդամ ըստ էութեան, իրաւունք ունի բողոքել թէ Վարչութեան եւ թէ Անդամական Ժողովի ապօրինի արարքներուն դէմ: Բայց նա այդ իրաւունքը չարաչար գործածելու չէ, խանգարելով կուսակցական տխրիքներ: Բողոքարկու մը նկատելու է, որ իր բողոքը որքան ալ որ արդար ու օրինական ըլլայ, անպայման իր արտայայտութեան առաջին իրի առիթով գտնելու է իր գոհացումը: Բողոքարկուն կրնայ դժգոհ մնալ եւ իր բողոքը արձանագրել տալով բաւականանալ:

307. 33.— Ո եւ է Հնչակեան ընկեր եւ Մասնաճիւղ, երբէք իրաւունք չունի բողոքել Ամերիկայի Պատգմ. Ժողովի որոշմանց եւ անկէ բխող Շրջ. Վարիչ Մարմնի դէմ: Շրջ. Վարիչ Մարմինը իր պաշտօնավարութեան շրջանին անքննադատելի ու Բար-

ձրրագոյն միակ Մարմինն է Ամերիկայի  
Շրջանակին:

ՅՕԴ. 34.— Մասնաճիւղի մը Վարչու-  
թեան կամ պարզ անդամներէն մէկուն հրա-  
ժարման պարագային, գրաւոր հրատարա-  
կանը պէտք է քննուի Անդամական Ժողովին  
սէջ եւ իր կարգին տեղեկագրուի Շրջանի  
Վարիչ Մարմնոյն:

ՅՕԴ. 35.— Մասնաճիւղ մը եթէ նկատէ  
իր Վարչութեան ո եւ է մէկ զեղծումը, իրա-  
ւունք ունի իսկոյն հրատարեցնել եւ ընտրել  
նորը, տեղեկագրելով Շրջ. Վարիչ Մ.ին:

ՅՕԴ. 36.— Իւրաքանչիւր Մասնաճիւղ  
պարտաւոր է իր նորեկ անդամներու մասին  
տեղեկագրել Շրջ. Վարիչ Մարմնին:

ՅՕԴ. 37.— Իւրաքանչիւր Մասնաճիւղ  
պարտաւոր է ընկերներէ հաւաքած գինուո-  
րական տուրքերը ու հանգանակած գումար-  
ըր առանց յապաղման, ուղարկել Շրջ. Վ.  
Մարմնին, Մասնաճիւղին համար պահելով  
տեղական ծախսերու բաւոյ գումար մը:

ՅՕԴ. 38.— Մասնաճիւղեր պարտաւոր  
են իրենց գանձապահը նշանակել նիւթական  
օրինական երաշխաւորութեան տակ առնը-  
նըւած վստահելի կարողութեան տէր ընկեր  
մը, ապագայի անախորժութիւններն ար-  
գիլելու կանխահոգութեամբ: Գանձապահը  
ամէն ժողովի հաշիւ ներկայացնելու է:

ՅՕԴ. 39.— Իւրաքանչիւր Մասնաճիւղ  
պարտաւոր է ստանձնել «Շրիտասարդ Հա-  
յաստան»-ի գործակալութիւնը, պահելով  
անոր առանձին հաշիւները:

ՅՕԴ. 40.— Մասնաճիւղեր եւ ընկերներ  
երբէք իրաւունք չունին հրատարակել թը-  
ռուցիկներ եւ չըջարեալականներ. իսկ եթէ  
նեոկայանայ մի ինչ որ չը նախատեսուած  
անհրաժեշտութիւն, այդ պարագային ա-  
նոնք երեք շաբաթ առաջ տեղեկագրելու են  
նախ՝ Շրջ. Վարիչ Մարմնին ու ապա առ-  
նելու են այդ քայլը:

ՅՕԴ. 41.— Մասնաճիւղերը պարտաւոր  
են իրենց հրաւիրած ատենախօսներու օրի-  
նական ծախսերը հոգալ եւ այդ մասին տե-  
ղեկագրել Շրջանի Վարիչ Մարմնին:

ՅՕԴ. 42.— Մասնաճիւղ մը առանց Շրջ.  
Վ. Մարմնի գիտութեան եւ հաւանութեան  
իրաւունք չունի Կուսակցութեան սկզբուն-  
քային խնդիրներու նկատմամբ բանակցիլ  
ուրիշ Կուսակցութեանց պաշտօնական Մար-  
միններու հետ:

ՅՕԴ. 43.— Իւրաքանչիւր Մասնաճիւղ  
պարտաւոր է իր պատգամաւորին հետ իր  
մէկ տարուան բարոյական եւ նիւթական  
հաշուեկշիւը զրկել Պատգմ. Ժողովին:

ՅՕԴ. 44.— Մասնաճիւղերը Շրջանային  
Պատգմ. Ժողովին ձայն ունին հետեւեալ

Համեմատութեամբ, 7-30՝ մէկ ձայն. 31-50՝ երկու ձայն ու անկէ վերջ, իւրաքանչիւր 50-ի մէկ ձայն. (51՝ երեք ձայն, 101՝ չորս ձայն) :

ՅՕԴ. 45.— Առանց Պաշտօնական անձերու եւ Մարմիններու ստացագրին՝ եղած բոլոր զբամական գործերն ու հաշիւները անվաւեր են :

ՅՕԴ. 46.— Մասնաճիւղ մը իր մէկ տարուան նիւթական եւ բարոյական պարտականութեանց մէջ ամբողջապէս թերացած է, այսինքն՝ ո՛չ Շրջ. Վ. Մարմնի հետ յարաբերութիւն պահած, ոչ ալ գինուտրական տուրքի կուսակցական պիւտճէի մասին մը տածած է, Պատգմ. Ժողովն մէջ ձայն ունենալէ կը զրկուի՝ առանց երկար պատճառաբանութիւնները քննելու: Շրջ. Վարիչ Մարմինը, Պատգմ. Ժողովէն ամէս մը առաջ, հրաւեր-չըջարեւրականի հետ այսպիսի Մասնաճիւղի մը զրկելու է իր վերջին պաշտօնական ծանուցագիրը, որուն զրականապէս պատասխանուելու է Պատգմ. Ժողովէն առաջ: Իսկ այն Մասնաճիւղը, որ մասամբ թերացած է իր պարտականութեանց մէջ եւ կամ ամբողջապէս թերանալէ վերջ, Պատգամաւորական Ժողովին մէջ իր պատգամաւորի միջոցաւ կը կատարէ իր պարտքերը ներկայացնելով իր պատճառաբանութիւնները, որ կենթարկուի Պատգմ. Ժողովի քննութեան: Պատգմ. Ժողովը եթէ բանա-

ւոր գտնէ պատճառաբանութիւնները՝ պատգամաւորը կը ընուի. հակառակ պարագային՝ զուրս կը հանուի, նոյն Մասնաճիւղը լուծուած հոչակող անմիջական յայտարարութեամբ մը:

ՅՕԴ. 47.— Լուծուած Մասնաճիւղերու դոյքերը կը մնան վատահելի ընկերներու քով, իբրեւ՝ Ս. Դ. Հնչակեան Խմբի, եթէ կեդր. Վարիչ Մարմինը յարմար կը դատէ:

ՊԱՏԳԱՄԱՆՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ՅՕԴ. 48.— Պատգամաւորական Ժողովը Ամերիկայի Շրջանի Օրէնադրական Բարձրագոյն Մարմինն է, որը տարին անգամ մը կը գումարուի, Մասնաճիւղերու եւ Շրջանի վերաբերեալ բոլոր հարցերով զբաղելու համար:

ՅՕԴ. 49.— Պատգմ. Ժողովը կը գումարուի Ամերիկայի Շրջանի Հնչակեան Մասնաճիւղերու ընտրած պատգամաւորներէն, ինչպէս եւ Շրջ. Վարիչ Մարմնի դիւանէն:

ՅՕԴ. 50.— Պատգմ. Ժողովը օրինաւոր կը համարուի, երբ հրաւիրուած Մասնաճիւղերու մեծամասնութիւնը ներկայ է, ինչպէս եւ ձայներու մեծամասնութիւնը:

307. 51.— Պատգամ. Ժողովի որոշումները պարտադրիչ են Ամերիկայի Շրջանի Հնչակեան բոլոր Մասնաճիւղերուն եւ ընկերներուն համար: Անմիջապէս կը լուծուի այն Մասնաճիւղը եւ կ'արտաքսուի այն ընկերը, որ Պատգամ. Ժողովի որոշումները չի ընդունիր եւ անոնց դէմ կարտայայտուի: Ամերիկայի Շրջանի Պատգամ. Ժողովը ուրիշ Շրջաններու վերաբերեալ կուսակցական ընդհանուր խնդիրներ չի կրնար վճռել: Իսկ տեղական խնդիրներուն մէջ, անոր օրէնքազրական իրաւասութեան սահմաններէն դուրս կը մնան ամէն կարգի սեղմումի փորձերը:

307. 52.— Պատգամ. Ժողովի հրաւիրողը Շրջ. Վարիչ Մարմինն է, որը պարտաւոր է Պատգամ. Ժողովի գումարման տեղն ու Ժամանակը մէկ ամիս առաջ հաղորդել Մասնաճիւղերուն, ուղարկելով անոնց նաեւ Ժողովի օրակարգը, որուն վրայ Մասնաճիւղերը կարող են աւելցնել իրենց կողմէ յարմար նկատուած ուրիշ հարցեր, նախապէս յայտնելով նաեւ իրենց մասնակցութիւնը:

307. 53.— Արտակարգ Պատգամ. Ժողով կը գումարուի՝ երբ Շրջ. Վ. Մարմինը անհրաժեշտ տեսնէ եւ ստանայ կանխաւ Մասնաճիւղերու մեծամասնութեան հաւանութիւնը:

307. 54.— Իւրաքանչիւր պատգամաւոր

պետք է, որ Մասնաճիւղի մը անդամակցած լինի:

307. 55.— Իւրաքանչիւր պատգամաւոր պարտաւոր է անպատճառ, առնուազն մէկ տարի անդամակցած լինի Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան: Բացի այն Մասնաճիւղերէն, որոնց կազմութիւնը վեց ամիս է:

307. 56.— Մասնաճիւղ մը բացի իր անդամէն, կրնայ պատգամաւոր ընտրել հեռաւոր մէկ ընկերոջ, նիւթական կամ այլ հանդամանքներու պատճառով:

307. 57.— Իւրաքանչիւր պատգամաւոր պարտաւոր է իր Մասնաճիւղի կնիքովը կնքուած ու դիւանի ստորագրութեամբը յանձնարարական մը ունենալ: Պատգամաւորները պիտի ընտրուին Անդամական Ժողովէն:

307. 58.— Պատգամաւոր մը Պատգամ. Ժողովին երկու ձայնէն աւելի չի կարող ներկայացնել:

307. 59.— Պատգամ. Ժողովը կընտրէ իր պատգամաւորներէն դիւան մը, որուն պաշտօնավարութիւնը կը տեւէ մինչեւ նիստին վերջանալը եւ կրնայ վերընտրուիլ:

307. 60.— Պատգամ. Ժողովի դիւանը պարտաւոր է նիստերուն արձանագրութիւնը կազմել, բնագիրը ստորագրուած բոլոր



պատգամաւորներէն եւ կնքուած տեղւոյն Մասնաճիւղէն կը յանձնէ Շրջ. Վարիչ Մարմնին. իսկ պատճէնը, Շրջ. Վարիչ Մարմնի կնիքով վաւերացուած՝ պէտք է ղրկել Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան՝ վաւերացուելու համար, որմէ յետոյ պէտք է ցրուել Մասնաճիւղերուն:

ՅՕԴ. 61.— Պատգմ. Ժողովի որոշումները կը տրուին քուէարկութեան յարաբերական դրութիւնով:

### ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ

ՅՕԴ. 62.— Պատգմ. Ժողովը կընտրէ Շրջ. Վարիչ Մարմին մը, բաղկացած հինգ անդամներէ. կընտրէ նաեւ հինգ թիկնածուներ՝ յաջորդական կարգով, որոնք իրաւունք կունենան Շրջ. Վարիչ Մարմնոյ անդամներուն հիւանդութեանց, հրատարման եւ դժբախտութեանց պարագային յաջորդել անոնց տեղը:

ՅՕԴ. 63.— Շրջ. Վարիչ Մարմինը Ամերիկայի Շրջանի Ս. Դ. Հնչակեան Կուս. Պատգմ. Ժողովի որոշումները գործադրող Բարձրագոյն Գործ. Մարմինն է, որուն անդամները թէեւ կրնան Գործիչ ըլլալ, բայց չեն կարող ըլլալ Մասնաճիւղի Վարչութեան անդամ, ինչպէս նաեւ չեն կրնար ըլլալ Խմբագիր:

ՅՕԴ. 64.— Յանուն Ամերիկայի Ս. Դ. Հնչակեան Շրջանի եղած պաշտօնական բոլոր յարաբերութիւնները Հայ եւ Օտար Քաղաքական Կուսակցութեանց հետ, կը կատարուի Շրջ. Վարիչ Մարմնի միջոցով, նախօրօք Մասնաճիւղերու մեծամասնութեան հաւանութիւնը ստանալով՝ կենսական խնդիրներու նկատմամբ միայն:

ՅՕԴ. 65.— Շրջ. Վարիչ Մարմնի անդամները, անհատապէս եւ հաւաքաբար, պատասխանատու են Ամերիկայի Ս. Դ. Հնչակեան Պատգմ. Ժողովին, իրենց բոլոր գործունէութեանց համար:

ՅՕԴ. 66.— Շրջ. Վարիչ Մարմինը իր բոլոր որոշումները կուտայ վարչական Ժողովով:

ՅՕԴ. 67.— Շրջ. Վարիչ Մարմինը ինք կընտրէ իր մէջէն՝ Ատենապետ, Ատենադպիր, Գանձապահ, Հաշուակալ, Դիւանապետ և Կնքապահ: Ատենապետի պաշտօնն է՝

Ա.— Վարչական Ժողովներու հրաւիրել Կեդր. Վարիչ Մարմնի անդամները:

Բ.— Եղած բոլոր որոշումներու անթերի գործադրութեանը հսկել:

—Գ.— Ստորագրել իր անունը՝ եղած բոլոր պաշտօնական դրութիւններուն տակ, Ատենադպիրին հետ:

Ատենադպրի պաշտօնն է՝

Ա.- Ժողովներու արձանագրութիւնը կազմել մասնաւոր տետրակի մը մէջ:

— Բ.- Թղթակցութիւն կատարել:

Գ.- Շրջ. վարիչ Մարմնի եկած բոլոր գրութիւնները ստանալ եւ պաշտօնակցի մը ներկայութեամբ բանալ:

Դ.- Ատենապետին հետ պաշտօնական գրութիւններու տակ ստորագրել:

— Կնքապահի պաշտօնն է՝

Պահպանել Շրջ. վարիչ Մարմնի կրէնիքը եւ քննել պաշտօնական բոլոր գրութիւնները: Առանց կնիքի գրութիւն մը անպաշտօն կը համարուի:

Գանձապահի պաշտօնն է՝

Ա.- Շրջ. վարիչ Մարմնի անունով եկած բոլոր գրամները ստանալ՝ փոխարէն ստացագիր տալով:

Բ.- Շրջ. վարիչ Մարմնի ծախսերը հոգալ:

Գ.- Ելեւմտական կանոնաւոր հաշուետօմար ունենալ, իր ձեռքով եղած ծախսերուն եւ զրկուած գրամներուն ընկալագրերը ներկայացնել Պատգմ. Ժողովին:

Դ.- Դրամական ամէն գործողութեանց տակ իր ստորագրութիւնը դնել:

— 21 —

Հաշուակալի պաշտօնն է՝

Ա.- Շրջ. վարիչ Մարմնի ստացած գումարները արձանագրել նախ քան դանձր մտնելը:

Բ.- Գնումներու եւ ծախսերու աղբիւրները ստուգել:

Գ.- «Երիտասարդ Հայաստան»-ի տը պարանէն ելած յայտարարութեանց ցանկը պահել, իրենց վճարման գներով: Թերթին վերջին էջին վրայ տպուած վճարուած ծանուցումներուն հսկել եւ պահել անոնց կրտսերները կանոնաւոր կերպով:

Ե.- Դրօշմաթղթի հաշիւները ստուգել:

ՅՕԴ. 68.- Շրջ. վարիչ Մարմինը իր ամբողջ կազմով եւ կամ զիւանով (Ատենապետ, Ատենադպր, Գանձապահ), պարտաւոր է Պատգմ. Ժողովին ներկայանալու, եւ որպէս հաւաքական Մարմին, մէկ քուէի իրաւունք ունի:

ՅՕԴ. 69.- Շրջ. վարիչ Մարմինը պարտաւոր է ունենալ բոլոր Մասնաճիւղերու վարչութեանց անունները:

ՅՕԴ. 70.- Մասնաճիւղերը իրենց տարեկան անգամավճարներու եւ մուտքերու հասոյթին մէկ երրորդէն, իրենց տեղական ծախսերը հոգայէն յետոյ, 25 տօլարէն աւելին կը զրկեն Շրջ. վարիչ Մարմնին իր

ծախսերուն համար, ինչպէս եւ «Երիտա-  
սարդ Հայաստան»-ի բաժնեգները եւ հա-  
սոյթը ամբողջութեամբ:

ՅՕԴ. 71.- Երջ. Վարիչ Մարմինը  
պարտաւոր է Ամերիկայի Հնչակեան Երջա-  
նակին գանձը շարունակ ապագայ հաւանա-  
կանութիւնները նախատեսելով՝ լեցուն պա-  
հէ Երջանի ընկերներու գինուորական տուր  
քերով, «Երիտ. Հայաստան»-ի բաժնեգնե-  
րով ու հատաւաճառներով, հանդէս-խըն-  
ջոյքի հասոյթներով. իսկ կուսակցական  
կան ծախսերը հոգայլ վերջ՝ մնացեալը  
ընդհանուր հանգանակութիւններէն տե-  
ղական ծախսերը հոգայլ վերջ, պարտա-  
ւոր են մնացեալը ղրկել Կուս. Կեդր. Վար-  
չութեան:

ՅՕԴ. 72.- Երջ. Վարիչ Մարմինը,  
իբր սկզբունք, իրաւունք չունի Մասնաճիւ-  
ղերու ներքին գործերուն միջամտել, բաց  
առեալ հետեւեալ պարագաներէ.

Ա.- Երբ Մասնաճիւղի մը ընթացքը կը  
վտանգէ Կուսակցութեան սկզբունքները,  
տակտիկան եւ կուսակցական շահերը:

Բ.- Երբ Մասնաճիւղը միջամտութիւն  
կը խնդրէ:

Գ.- Երբ Մասնաճիւղի մեծամասնութիւ-  
նը միջամտութիւն կը պահանջէ:

ՅՕԴ. 73.- Երջ. Վարիչ Մարմինը նո-

րակազմ Մասնաճիւղերու կազմութիւնը ի  
գիտութիւն կը յայտարարէ Մասնաճիւղե-  
րուն եւ անոնց պաշտօնականութիւնը վա-  
ւերացնել վերջ, կը տեղեկագրէ Կեդրոնա-  
կան Վարչութեան: Վ. Մարմինը նոյն տը-  
րամագրութեամբ կը վերաբերուի նաեւ,  
լուծուած Մասնաճիւղերու նկատմամբ: Երբ  
Մասնաճիւղ մը ընկերներու թուական ո-  
րոշեալ քանակը երբ կը կորսնցնէ, կը լուծ-  
ուի եւ կամ յանցանքի մը համար կը լուծուի  
Վ. Մարմինը այդ իրողութիւնը ի գիտու-  
թիւն Մասնաճիւղերուն կը յայտարարէ,  
պատճառաբանութիւններն ու հիմունքները  
ներկայացնելով Կեդր. Վարչութեան:

ՅՕԴ. 74.- Երջ. Վարիչ Մարմինը պար-  
տաւոր է ունենալ վիճակագրական տուր  
մը, ուր արձանագրուած պէտք է ըլլայ Մաս-  
նաճիւղերու անունները, անդամներուն թի-  
ւը, անոնց անունները, տարիքը, պարագ-  
մունքները (թէ անցեալ եւ թէ ներկայ),  
ամուսնացած թէ՛ ամուրի, առողջ թէ՛  
վատառողջ եւ ո՞ր տեղացի լինելը:

ՅՕԴ. 75.- Երջ. Վարիչ Մարմնոյ պաշ-  
տօնավարութեան չրջանը կը տեւէ մինչեւ  
յաջորդ Պատգմ. Ժողովը:

ՅՕԴ. 76.- Երջ. Վ. Մարմնոյ պաշտօ-  
նավարութեան ժամանակը դադարած կը հա-  
մարուի, երբ իրեն փոխարինող նոր Մար-  
մինը մէջտեղ կուգայ:

ՅՕԴ. 77.- Երջ. Վ. Մարմինը՝ արխիւը

կը յանձնէ նորընտիր Մարմնոյն: Մինչեւ որ նոր Մարմնի մը ընտրութիւնը տեղի չունենայ, Շրջ. Վ. Մարմինը իր գոյութիւնը կը պահէ եւ ընթացիկ գործերը կը վարէ:

ՅՕԴ. 79.- Շրջ. Վ. Մարմինը, ի ներկայութեան բոլոր Պատգամաւորներու՝ կը բանայ Պատգմ. Ժողովը եւ կը կատարէ պատգամաւորներու վկայագրերու նախնական ըննութիւնը:

ՅՕԴ. 79.- Շրջ. Վ. Մարմինը եթէ առանց ո եւ է բանաւոր պատճառի թերանայ Պատգմ. Ժողով գումարել, Մասնաճիւղերը ազատ իրաւունք ունին, փոխադարձ համաձայնութեամբ եւ ձայների մեծամասնութեամբ, առանց հրաւերի սպասելու՝ գումարել Պատգմ. Ժողովը, իր որոշեալ Թեղը:

ՅՕԴ. 80.- Շրջ. Վարիչ Մարմինը լուծուած կը համարուի:

Ա.- Երբ իր անդամներու թիւը երեքէն պակաս է.

Բ.- Երբ Մասնաճիւղերու մեծամասնութիւնը կը պահանջէ Պատգմ. Ժողով գումարելով ընտրութիւն կատարել:

### ԳՈՐԾԻՉՆԵՐ

ՅՕԴ. 81.— Ընկեր թէ Ընկերուհի գործիչներ, Ամերիկայի Ս. Դ. Հնչակեան Շրջ.

Ղանի պրօպագանդիստ ընկերներն են, որոնք կընտրուին Շրջ. Վարիչ Մարմնոյ կողմէն:

ՅՕԴ. 82.— Գործիչները Շրջ. Վարիչ Մարմնէն կտանան իրենց յատկացուած թոշակը, որ համապատասխանելու է իրենց պարագաներուն եւ ընթացիկ շաբաթավճարներուն:

ՅՕԴ. 83.— Գործիչները իրաւունք չունին ո եւ է դրամական գանձում ընել Մասնաճիւղերէ եւ կամ ընկերներէ՝ յանուն «Երիտ. Հայաստան»-ի եւ կամ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան:

ՅՕԴ. 84.— Գործիչները իրաւունք չունին առանց Շրջ. Վարիչ Մարմնի գիտութեան եւ հաւանութեան, ո եւ է բանակցութեւն եւ կարգադրութիւն ընել Կուսակցութեան անունով Հայ եւ Օտար Կուսակցութեանց հետ:

ՅՕԴ. 85.— «Երիտասարդ Հայաստան»-ի բոլոր գոյքերը, Շրջ. Վարիչ Մարմնի արխիւները, գրքերը, տպագրական մեքենաները, տառերը եւայլն, բոլորն ալ, սկիզբէ մանրամասն թիւերով եւ իրենց արժէքներով ըստցակագրել առանձին տօմարի մը մէջ, որը ամէն Պատգմ. Ժողովի ընտուելով, կատարագրուի ու կը յանձնուի նոր ընտիր Շրջանի Վարիչ Մարմնին:

ՅՕԴ. 86.— Երջանակային Ժողովները ամէն Մասնաճիւղի կատարեալ իրաւունքը ըլլալով, ո եւ է արգելքի ներքեւ պէտք չէ դրուի, որուն որոշումները սոսկ թելադրութիւններ կրնան ըլլալ Մասնաճիւղերուն:

ՅՕԴ. 87.— Երջ. Վարիչ Մարմինը ազատ է ամեն ատեն Սորհրդակցական Ժողով գումարել, հրատապ հարցերու շուրջ կանչել իր մօտ շրջաններէն կարող ընկերներ եւ անոնց խորհուրդները ստանալ ու որոշումներուն ինքը պատասխանատու մընալ:

### ՅԱԻԵԼՈՒԱԾ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Ա.— Երջանի Վարիչ Մարմինը, բացի Պատգմ. Ժողովի որոշումներէն, կրնայ անհրաժեշտ դորձեր կատարել, որոնք նախատեսուած չեն Պատգմ. Ժողովին մէջ. դորձելու է միաձայնութեամբ, պատասխանատու մնալով Պատգմ. Ժողովին:

Բ.— Երջանի Վարիչ Մարմինը կրնայ պատժել իր մէկ անդամը առանց այլեւայլի եւ հրաւիրել անոր յաջորդը, Մասնաճիւղերուն իրողութիւնը ներկայացնելով:

Գ.— Երջանի Վարիչ Մարմինը երկու ամիսը անգամ մը լիանդամ նիստով պէտք է վերատեսուութիւնը ընէ դրամական գործառնութեանց եւ այդ մասին պահէ կատարեալ հսկողութիւն: Պատգմ. Ժողովին մէջ, Վ.

Մարմինը պէտք է կարգայ հաշուետեսութեան նիստերու արձանագրութիւնները:

Դ.— Երջանի Վարիչ Մարմինը գնահատման քուէ կստանայ հետեւեալ պարագաներու ներքեւ.

1.— Երբ ուժեղացած է Կուսակցական տիւիբրիներ:

2.— Երբ զարգացուցած է ընկերներու դասակարգային գիտակցութիւնը, մասնաւոր ուղղութիւն տալով գործիչներու պրօպագանդին եւ հսկելով թերթին:

3.— Երբ Մասնաճիւղերու կազմակերպչական ընդհանուր դրութիւնը պահած է կանոնաւոր ու ներդաշնակ:

4.— Երբ հաշուական խնդիրները դուրս թողուցած է ամեն տեսակ կասկածներէ:

5.— Երբ Կուսակցութեան ելեւմուտը կանոնաւորած է եւ գանձը դատարկ ներկայացուցած չէ:

6.— Երբ յանցաւորները կրցած է օրինաւորապէս պատժել եւ կուսակցական մեխանիզմը հեռու պահել անհատական քմահաճոյքներու ոտնձգութենէն:

7.— Երբ Կուսակցութեան բրիտախիժը բարձր պահած է Հայ Ժողովրդին եւ օտար Կուսակցութեանց առջեւ:

ՅՕԴ. 85.— Գործիչները երբէք իրաւունք չունին Մասնաճիւղերու անդամական թէ հրապարակային ժողովներու մէջ Կուսակցութեան ուղղութեանը անհամապատասխան արտայայտութիւններ ընել, այլ անոնք հաւատարմօրէն հետեւելու են թերթի ուղղութեան եւ Շրջ. Վարիչ Մարմնի հրահանգներուն:

ՅՕԴ. 86.— Գործիչներ պէտք չէ բնաւ ընկերական-կուսակցական շրջանակի պատկանող պատասխանատու կամ ոչ պատասխանատու ընկերներու մասին գովեստ կամ պարսաւանք ընեն Մասնաճիւղերու մէջ: Անոնք միմիայն լծուած ըլլալու են կուսակցական կազմակերպչական գործին եւ ընկերներու դասակարգային գիտակցութիւնը ուժեղացնելու աշխատանքին: Անհատ ընկերներ ովքեր ալ որ ըլլան, հաւաքականութեան առջեւ պիտի նկատել հասարակ գործաւորներ, որոնց գործունէութեան մասին գովեստ կամ պարսաւանք կը տրուի Պատգ. ժողովին մէջ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ

ՅՕԴ. 87.— «Երիտասարդ Հայաստան»ը Ս. Դ. Հնչ. Կուսակցութեան Ամերիկայի

Շրջանի սեպհականութիւնն է (ինչպէս նաեւ Խմբագրութեան գոյքերը եւ տպագրական բոլոր գործիքները), որ Միացեալ Նահանգաց մէջ ինֆօրմատիօնային եղած է՝ «Երիտասարդ Հայաստան հրատարակչական ընկերութիւն անուեով: «Երիտ. Հայաստան» հրատ. ընկերութեան ղեկավար Մարմինը, Շրջ. Վարիչ Մարմինն է, որ բացարձակ եւ իրաւասու Մարմինն է, որ Պատգ. ժողովի իրեն տուած յանձնարարութեան համաձայն կրնայ վերաբերուիլ «Երիտասարդ Հայաստան»-ին իւրական թէ բարոյակաճ կազմաձեւին հետ:

ՅՕԴ. 88.— «Երիտասարդ Հայաստան»ի Խմբագիրը կը նշանակուի Պատգ. ժողովէն Շրջ. Վարիչ Մարմնի իրաւասութեան եւ ֆոնթօրիէ ներքեւ:

ՅՕԴ. 89.— Շրջ. Վարիչ Մարմինը ուշի ուշով պիտի հսկէ Խմբագրի թերթին տուած ուղղութեան վրայ, զայն պահելու համար Պատգ. ժողովի գծած ճամբուն մէջ:

ՅՕԴ. 90.— Խմբագրականներ չը պիտի ստորագրուին ու թերթին մէջ երեւցած ուղադրաւ յօդուածաշարքերը պէտք է վերածուին պրօշիւրի կամ գրքի:

ՅՕԴ. 91.— «Երիտ. Հայաստան»ի պիւտճէն կը պատրաստուի բաժանորդագրութիւններով, հատաժաճառներով, ծանուցումներով եւ ընկերներու կամաւոր նուիրատու-

թիւներով, նաեւ տպագրական զանազան գործառնութեամբ:

ՅՕԴ. 92. — «Երիտ. Հայաստան»ը պիտի ունենայ իրեն ուրոյն ելեւմտական հաշուետոմարը, որ խիստ խնամով պէտք է պատրաստուած ըլլայ:

Մասնաճիւղ մը երբ պատահուած է, կամ այլեւայլ խնդիրներու շուրջ բաժնուած է երկու մասի, կը զրկուի Պատ. Ժողովի մասնակցելու իրաւունքէն, երբ այդ մասին որոշ կարգադրութիւններ եղած չեն:

Խոշոր քաղաքներու մէջ նկատի ունենալով հաւաքման ու այլ դժուարութիւնները մի քանի Մասնաճիւղեր կրնան գոյութիւն ունենալ՝ Շրջ. Վարիչ Մարմնի վաւերացմամբ:

Պատգմ. Ժողովը կը բանայ Շրջ. Վարիչ Մարմնի ներկայացուցիչը, բայց երբ Շրջ. Վարիչ Մարմինը ինքն իր մէջ բաժնուած է մասերու, ան կը զրկուի այդ իրաւունքէն եւ Պատգ. Ժողովին մէջ կը նստի դատապարտեալի աթոռին վրայ. Այդպիսի պահու մը տեղւոյն Մ-ճիւղի Ատենապետը քանի մը խօսք կըսէ ու պատգամաւորները կը հրաւիրէ ընտրել Ժողովի դիւանը, որը իր կարգին վկայականներու քննութիւնը կատարելէ վերջ՝ կսկսի իր աշխատանքին: Շրջ. Վ. Մարմինը իր գոյքերը ամբողջապէս կը յանձնէ Ժողովին, ինչը մնալով

սոսկական բացատրութիւննեց տարու դերին մէջ:

Ս. Դ. Հնչ. Կուսակցութեան բոլոր գործիչները կամ Խմբագիրը, անպայման Մասնաճիւղի մը պիտի պատկանին, վճարելով իրենց անդամավճարները:

Ներկայ Կանոնագիրը միաձայնութեամբ վաւերացուած է Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան ՅՐդ Պատգմ. Ժողովին կողմէ:

ՍՕՅԻԱԼ ԴԵՄՕԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿ



2013  
ՀՀ Ազգային գրադարան  
8208  
NL0040726

